

ՔՍԱՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբ.  
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.  
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.  
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(բացի կիրակի և տոն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է առն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են  
խրաբանչիւր բառին 2 կոպեկ.  
Տէլէֆօն № 253.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐԿԱՅ 1898 ԹԱՎԱՆԻ

## ՄՇԱԿ

(26-րդ ՏԱՐԻ)

ԴՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՓԵՏՐՎԱՐԻՑ «ՄՇԱԿ» ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ԱՄԵՆ ՕՐ ԲԱՅԻ ՏՈՆ ԵՒ ՏՈՆԵՐԻՆ ՅԱՋՈՐԻ  
ՕՐԵՐԻՑ

«ՄՇԱԿ» տարեկան գինը թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 ռուբլի է, տան և մէկ և տան ամսականը՝ 9 ռ., ինչ և ութ ամսականը՝ 8 ռ., եոթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ., մի ամսականը՝ 1 ռուբլի:

«ՄՇԱԿ» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բաղարապա և Բարսեղյան փողոցների անկիւն):  
Կայտարարութիւնները գրվում են «ՄՇԱԿ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է գրիմը հետևեալ հասցեով. ТИФЛИСЪ, редакция „МШАКЪ“, իսկ արտասահմանից՝ ТИФЛИС, Rédaction du journal arménien „MSCHAK“.

Յայտարարութիւններ ընդունվում են թէ հայերէն, թէ ռուսերէն և թէ օտար լեզուներով:  
Բառեր վճարվում է 2 կոպեկ:

### ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Հակառակ հոսանք.—ՆԵՐԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.  
Ձեռնադրի հարցը զաւառական արտադրանքի  
թան ժողովում. Ռուսաց դրամատիկական ներ-  
կայացումները. Նամակ Բագրից. Նամակ Գեր-  
բեղից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լու-  
րեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կղերականու-  
թիւնը Փրատիայում. Նամակ Եղեգարիայից. Ար-  
տաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-  
ԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մէլերի աղբիւր:

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՈՍԱՆԳ

Թիւրքահայերը հայրենիք են վերադառ-  
նում: Մինչև այժմ այսպիսի լուրեր մենք  
ստանում էինք Անդրկովկասի զանազան կող-  
մերից, Բոլշարայից և ուրիշ տեղերից, իսկ  
այժմ վերադարձի ձայնը զայլս է թիւրք-  
քահայերի համար նոր աւետեաց երկիր  
դարձած Հիւսիսային Ամերիկայից: Միա-  
ցեալ Նահանգների մեր թղթակիցը հա-  
ւատացնում է, որ հայրենիք վերադառ-  
նալու միտքը անհասանելի չէ պատ-

կանում, այլ շատ շատերին: Ստացվում է  
այն վերին աստիճանի միջնորդական եղ-  
րակացութիւնը, որ Թիւրքիայից փախած  
հայր աշխարհի բոլոր անկիւններում էլ  
հասկանում է թէ իր հայրենիքից դուրս  
չը կայ նրա համար երջանկութիւն: Փա-  
խուստը նրան ազատեց սրից և կրակից,  
բայց չը դարձրեց նրան թափառաշրջիկ,  
հողից զրկված մի մարդ, որի համար զա-  
նազանութիւն չը կայ աշխարհագրական  
դիրքերի մէջ: Այն կատարեալ մարտիրո-  
սական տոկոսութիւնից յետոյ, որով այդ  
ժողովուրդը զիմացաւ իր վրա թողնելով  
հարուածներին, առաքելութեան ամե-  
նամեծ նշանը պէտք է համարել նրա  
սէրը դէպի իր հողը, իր գիւղը: Նա դար-  
ձեալ յետ է նայում, գիտէ, որ իր բաղդը  
պէտք է որոնել ոչ այնպիսի տեղերում, ուր  
իր արինակից եղբայրը կարող է մուրացկանի  
մի կտոր հացը տալ նրան: Թիւրքահայի  
համար ամեն ինչ կայ աշխարհի զանազան  
կողմերում—ազատ կենցաղ, մարդասիրու-  
թեան հայթայթած ձրի հաց, աշխատանք

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՄԵԼԻՔԻ ԱՂԶԻԿԸ

Այդպիսի բանկումներ Աննա-խաթունը տեսել  
էր մի երկու անգամ էր: Դրանք սարսափելի  
բույժներ էին, երբ վայրենի դաղորդ վրդով-  
վում էր իրան զաղող սանձերից և փորձում էր  
մի կատաղի ոտիւնով, մի անոթում յարձակու-  
մով ունչացնել բոլոր արքիւնները և վազել իր  
կրքերի ետեւից: Ամենազեղեցիկ, ամենից խո-  
նար ու խեղճ որսն էլ զաղանը սիրում է ուտել  
այնպէս, ինչպէս իր բնատրութեանն է վայել:  
Իսկ այստեղ ձեռնադրութիւնների անունից են  
խոսում, այստեղ պէտք է դեռ լսել, խոսել,  
պատճառներ քննել... Միթէ դա վայելուչ բան  
է մի սիրեացի քաջի համար, որի առաջ մինչև  
այժմ ոչ մի բան չէ դիմադրել և որի աչքը տես-  
նում է թէ ինչպէս ման է զաղին կարմրող հիւ-  
րին...

Աննա-խաթունը, սակայն, զսպում էր նրան  
և այդ սարսափելի բույժներին: Որտեղից էր  
նա վերցրել այդ հրաշալի կարողութիւնը: Ամե-  
նապիտանոր ինքն իրան չը կորցնէին էր. պէտք  
էր մնալ հանդարտ, անխուժ: Այս անգամ էլ  
նա շատ լաւ պահեց իրան, մինչև իսկ շարտ-  
նակից ժպտալ: Բայց այլ ևս չը յիշատակեց իր  
մայրական զղացմունքները, սրտի փափազը,  
ուրտը, ինչպէս արել էր առաջ: Այս անգամ  
նա իրան ոչինչ հոգակեց և շահագործեց մի նոր,  
աւելի զօրեղ պատճառաբանութիւն:

—Քո կամքն է, բէկ. ասաց նա մի ծայրահեղ  
հնազանդութեամբ:—Եթէ դու կամենաս, ես ինչ  
մի բան եմ, որ պնդեմ թէ դու էլ ուղղութիւն

պիտի անես ինձ: Ո՛չ, մինչև այժմ արածն էլ  
բաւական է ինձ: Բայց կայ մի այլ հանգամանք:  
Մեզանում նշանած աղջկան շատ ուրախ են պա-  
հում, կատարում են նրա բոլոր ցանկութիւննե-  
րը, պատիւներ են անում. մեղաւորում փեսան  
մինչև հարսանիքի օրը աղջկայ ստորուն է: Գի-  
տես ինչու: Սիրտ կայ, բէկ... Սիրտը մի բարակ  
ապակի է, երբ փշրեց, այլ ևս չիմել, կարկա-  
տել չէ կարելի: Բարակ ապակին կարող է կոտ-  
վել ամենաչնչին պատճառից, ուրեմն պէտք է  
զգոյշ լինել, մանաւանդ որ ժամանակն էլ երկար  
չէ: Հարսանիքից յետոյ, ինչ խօսք, աղջիկը իր  
ամուսնու հըռ ծառան է և այնուհետև նա ինքը  
պիտի աշխատէ, որ չը կտորէ ամուսնու սիրտը:  
Քո նշանածն էլ, բէկ, ուղղում է այդպէս լինել:  
Նա ստատիկ ցանկանում է վայելել նշանած  
աղջկայ բախտը: Ո՛վ գիտէ ինչեր կան ջանքի-  
ւորում: Նա հաւաքում է իր ընկեր աղջիկնե-  
րին, խօսում է նրանց հետ, ծիծաղում է, կար-  
մրում է... Ես չեմ ասի թէ ինչեր է նա խօսում,  
դու բոլորը կիմանաս յետոյ, երբ միասին կը լի-  
նէք. և կիմանաս թէ որքան լաւ էին այս օրերը  
նոյն իսկ քեզ համար... Աղջիկն դեռ չէ կշտա-  
ցել այդ խոլ բրթիմիւններէր, նա ինքն է ու-  
ղում որ ժամանակ տաս, բէկ: Զանկութիւնը  
միայն մի անգամ է լինում... Նա գիտէ այդ և  
բոլորովին կասկած չունի, որ դու չես արգելի  
նրան քել էլ ուրախանալ...

Բէկը հեռանում էր, դարձեալ փախված  
ցանցերի մէջ. դարձեալ պէտք էր վերադառնալ  
և շուտ վերադառնալ այս դարմանալի տունը,  
որ նրան այնքան հաճելի կերպով այրում էին:  
Նա միայն ասաց.

—Շուտ արե՛ք... Ինչ անելու էք, շուտ վեր-  
դառնէք: Դարձեալ մօտ է. ես ասել եմ, որ գար-  
նան չեմ սպասի...

Եւ մայր ու աղջիկ, ճիշդ որ, շտապում էին...

զանելու, սեփական քրտինքով ապրուստ  
ձեռք բերելու գիւրութիւն. պակաս չէ և  
ծայրահեղ տոկոսութիւնը, որ զիմաւորում  
է նրան մի քանի տեղերում: Բայց նա  
դարձեալ չէ մոռնում այն տեղը, ուր  
թողել է իր ծխացող տունը:

Պէտք է ասել թէ ողբան ճիշդ ու ար-  
դար է այդ հասկացողութիւնը: Մի հողա-  
գործ ժողովուրդ, որ մոռացութեան է  
տալիս իր հողը, որ կարծում է իրան պա-  
հած, մեծացրած միջնափայրից, չէ կարող  
իրան ապահովել հաստատուն կերպով: Հա-  
յերը նոր չը պիտի սովորեն այս ճշմար-  
տութիւնը: Եթէ մի ժամանակ թիւրքահայր  
հեռանում էր տանից, իմանալով որ օտար  
երկրում նրան կը փայփայեն, կը տան հող,  
ամեն տեսակ արտոնութիւնների կարժա-  
նացնեն,—այժմ այդ հանգամանքը այլ ևս  
չէ կարող քել, տանել նրան: Կուտուրական  
ոյժը, զիմացկանութիւնը ձեռք է բերվում ոչ  
մարդասիրութեան տուած փշրանքներով,  
ոչ էլ արտաքին աշխարհի փայլերով, այլ  
յամառ և քրտնաթոր աշխատանքով հայ-  
րենի հողի վրա: Ինչպէս անհատը բնական  
օրէնքով ձգտում է սերունդ առաջացնել և  
անխնայ կուտում է բոլոր աննպաստ հան-  
գամանքների դէմ, այնպէս էլ մի ժողո-  
վուրդ պիտի աշխատէ գործել այն միջ-  
նափայրում, որտեղ նա կարող է մնալ, լի-  
նի կենտոնակ, օգտաւէտ տարր: Զոհա-  
բերութիւնը կեանքի անխուսափելի պա-  
հանքն է. մինչև որ մարդը չը գոհնէ իր  
անձական երջանկութիւնը, նա չէ կարող  
սերունդ մեծացնել, դառնալ ընտանիքի  
զուլա:

Մենք շատ լաւ գիտենք, որ անհնարին  
է պահանջել մի սարսափահար ժողովուրդից,  
որ նա նստէ իր տանը: Բայց որովհետեւ  
ինքը, հայր, իր պանդխտութիւնից, զոդ-  
ըղուն քաջիկ է ուղղում դէպի իր եր-  
կիրը, մենք մեր սրբազան պարտքն ենք  
համարում խրախուսել նրան, հասկացնել,  
որ նա չէ սխալվում: Թիւրքահայրը ցոյց է  
տալիս, որ իր պանդխտութիւնը ժամանակա-

ւոր է: Այ՛ո, այդպէս էլ պիտի լինի: Մենք  
չենք որոշում պանդխտութեան ժամանակը,  
մենք այսօր ողջունում ենք այն հակառակ  
հոսանքը, որ սկսվել է օտար երկրներից  
դէպի հայրենիք:

### ՆԵՐԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԶԵՄՍՏՎՈՅԹԻ ՀԱՐՑԸ ԳԱՆԱՍԱԿԱՆ ԱԶՆՈՒԱ-  
ԿԱՆՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎՈՒՄ

Գործ, ապրիլի 13-ին

Ապրիլի 11-ին այստեղ կայացաւ Գործը դա-  
ւառական արտադրանքի արտաքին կարգի  
ընդհանուր ժողովը, նախագահութեամբ արտա-  
կանների պարագլուխ իշխան Բաղդասար-Պա-  
վլովի: Ժողովին մասնակցում էին աւելի քան  
80 անդամ. ներկայ էին և բաղրաձիւ հիւրեր,  
որոնց թւում է արկիւններ ու օրիորդներ: Ժո-  
ղովի հետաքրքրութիւնը կայանում էր նրանում,  
թէ ինչպէս կը վերաբերվի մեր դաւառի աղ-  
նուականութիւնը այն հարցին, որ վաղուց ար-  
դէն արժարժվում է Կովկասի պարբերական մա-  
սուլի մէջ և ինտելիգենտ շրջաններում: Խօսքը  
զեմստովօյի մասին է: Հարցը ընդհանուր ժո-  
ղովի առաջ դրվեց հետեւալ ձևակերպութեամբ.  
«Յանկայի է արդե՞ր զեմստովօյական նիւսարկու-  
թիւնների մտցնելը և Թիֆլիսի նահանգում, ինչ-  
պէս այդ գոյութիւն ունի արդէն Ռուսաստա-  
նում»:

Մտքերի փոխանակութեան ժամանակ յայտն-  
վեց, որ ժողովականներից շատերը պարզ դա-  
րափար չունեն զեմստովօյի կարգութեան և նրա  
լաւագոյն կողմերի մասին: Ամանք, օրինակ,  
կասկած էին յայտնում, որ մեր երկրում զեմստ-  
ովօ մտցնելով հարկերը այնքան կը ծանրանան,  
որ նրանց վճարելը իրանց ուժից վեր կը լինի:  
Տեղի տեսնան երկար փնտրանքութիւններ, ո-  
րոնց ժամանակ և պարզեցնել եղած թիւրմա-  
ցութիւնները: Ժողովին հարգողիցն էր Ռուսաս-  
տանի զեմստովօյների գործունէութիւնից մի քա-  
նի տեղեկութիւններ և թանաշաններ, որոնք  
ինքն բոտ ինքեան բաւական պերճախօս էին:  
Այդ հարցը կնխարկվեց բաց քուէարկութեան:

Բացում էր նրա գլուխը, ձեռքը մեկնում էր  
դէպի դուրս և ասում էր.

—Ամբողջ Դարապարդ մեզ է նայում...

Այն ժամանակ մայրը կորցնում էր հակաճա-  
ռելու համարականութիւնը: Ընկած տեղից նա  
բարձրանում էր լուռ ու խոնարհ, յենկով իր  
աղջկայ թևերին, նեցուկ որոնելով նրա շունչի,  
նրա մարմնի տաքութեան մէջ: Նայում էր դրսի  
աշխարհին և նրան թւում էր թէ հսկայ սարերը  
մի-մի աչք դարձած իրան են մտիկ տալիս լաւ-  
ված ուշադրութեամբ, անամբեր... Նրան քա-  
շում տանում էին այդ վիթխարի հայեացքները և  
ասում էին, որ արածը քել է, թոյլ, անբաւարար...

Իսկ գործը իրաւ որ դադար չէր առնում: Մայր  
ու աղջիկ Մէլիք-Աւանի հրահանգները կատա-  
րում էին մի մոլեռանդ ճշդութեամբ, որ միայն  
կանանց է յատկաց: Գիշերները, մութի մէջ,  
հանդարտ ու անկատելի կերպով, հասո-  
տաղամարդիկ ստուգներին պէս մանում էին մէ-  
լքի դռներով: Ներքնայարկի մեծ սենեակում,  
որ մի ժամանակ Զալալն ու Գայիանէն հան-  
դիպեցան միմեանց, վառ էր մնում ձգթի ճրա-  
գը: Այդտեղ Աննա-խաթունը խօսում էր, հաս-  
կացնում էր ամեն ինչ, գիշերային այցելուն  
հեռանում էր միայն այն ժամանակ, երբ հաս-  
տատ խօսք էր տալիս և երգվում սուրբ գործի  
անուսով: Գայիանէն համարեա բոլորովին չէր  
մասնակցում այդ տեսակցութիւններին. նա դի-  
տել, որ դրսի աշխարհը դարձեալ երեկայ է  
համարում իրան և դարձեալ չէ հասկանում թէ  
ինչու ինքը այդքան ուղղում է թիւրք բէկի կինը  
զառնալ: Աննա-խաթունը խօսում էր իր կող-  
մից, Մէլիք-Աւանի կողմից: Գործի սկիզբը լաւ  
էր դրված և մարդկանց դժուար չէր հաստատա-  
ցնել: Ամենից առաջ գաղտնի խորհրդին մաս-  
նակից եղան մէլքի տան ամենապալա, յուսալի  
բարեկամները. սրանք հանդարտ կերպով տարա-



Ներքայ, որ ժողովի անպակն մեծամասնութիւնը  
զեմատույն կողմն է, գանդեցին մի քանի հոգի  
միայն, որոնք անպակ են զրան: Քուէար-  
կութեան արդիւնքը ժողովին ներկայ եղող հիւ-  
րերի կողմից ընդունուեց ջերմ ծափահարութիւն-  
ներով:

Հակառակորդները իրանց վերաբերմունքը  
պատճառաբանեցին հետեւեալ կերպով. «Մենք  
սկզբ ունեցող ամենին դէմ չենք զեմատույնին,  
ընդհակառակը ամբողջ սրտով համակրում ենք  
այդ օգտաւէտ հիմնարկութեան. բայց... բայց  
մեզ մօտ զեմատույնի մտցնելու մտքի հետ մենք  
հաշտուել չենք կարող, մինչև որ մեզ չը ներ-  
կայացնեն հարցի լուրջ և բազմակողմանի ու-  
սումնասիրութիւնը, թուանշաններ և անհրաժեշտ  
ստատիստիկական տեղեկութիւններ, որոնք կա-  
րող լինեն համոզել մեզ, որ զեմատույն մեզ ևս  
կարող է օգուտ բերել...»: Այս պատճառաբա-  
նութիւնը լսելուց յետոյ մեզ հետ միասին շա-  
տերը ակամայ յիշեցին պ. Վելիշկովին և նրա  
սովորական մանեօվը՝ «սկզբունքով համակ-  
րում ենք, բայց...»:

Այս ժողովի ընդադատութեան առարկայ դար-  
ձաւ և մի ուրիշ կարևոր հարց: Նախագահը ժո-  
ղովականների ուշադրութիւնը դարձնելով այն  
հանգամանքի վրա, որ ազնուականութիւնը ու-  
նենալով բազմաթիւ կարիքներ՝ միաժամանակ  
չունի նրանց բաւականութիւն տալու համար  
կազմակերպած նպատակայարմար միջոցներ, ա-  
ռաջարկեց հիմնել «ազնուականների դասձարան»,  
ուր ամեն մի ազնուական պարտաւոր է մտցնել  
տարեկան (եթէ միայն համաձայն է) ոչ պակաս,  
քան երկու բուլլի դրամով կամ բերքով: Այս-  
պիսով գոյացած գումարը միջոց կը տայ որոշ  
չափով բաւականութիւն տալ ազնուականների  
թէ ընդհանուր և թէ նոյն իսկ մասնաւոր ան-  
հատան կարիքներին: Առաջարկութիւնը ժողովից  
ընդունուեց միաձայն «Գանձարանի» համար ծը-  
րարած կանոնադրութիւնը կարգացուցեց ժողո-  
ւում և նրա մի քանի կէտերը ենթարկեցին  
փոփոխութիւններ և լրացումներ, ապա որոշ-  
վեց կանոնադրութիւնը ներկայացնել ի հաստա-  
տութիւն: Ընտրվեցին նոյն իսկ «ազնուականնե-  
րի դասձարան» վարչութեան անդամներ և փոխ-  
անդամներ:

ՌՈՒՍՍԱՅ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐ

Հէքեաթ, մեղօղբաման և քրական աշխարհ-  
աւա այն տարրերը, որոնցից կազմված է Պիեր  
դը Վուրսէի «Նրբու մանուկներ» պիէսան, որ  
Կորչի խումբը ներկայացրեց երկուշաբթի, ապ-  
րիլի 13-ին, ամբողջապէս լի Արքունական թատ-  
րօնում: Կոմս դը Կերբորի (Նակուլիւ) քայլ և  
ծերացած Սենտ Գրիէի (Չարսկի) կին Կարմէնը  
(Միլոնովա) սիրում է վրեւորական Րոբէր դ'Ալ-  
բոսպին (Տուգանով) և ունի նրանից մի գաւաթ:  
Կարմէն դ'Ալբոսպին նամակները ստանում է իր  
հարսի՝ կոմսուհի դը Կերբորի (Աղօղարովա) հաւ-

ծում էին իրանց լսածը: Մեծ եռանդով գոր-  
ծում էր և Աղանը. իսկ պակասը լրացնում էին  
Վարդապի միւս գաւառներից եկած լուրերը,  
որոնք ցոյց էին տալիս թէ միայն Մէլքը Յու-  
ռէնին կրնէ չէ քարոզում այդ դարմանալի և  
մի և նոյն ժամանակ շատ պարզ ու ճարտար  
միջոցը: Վարդապի այնքան ընկած և անրա-  
դայականացած չէր, ինչպէս երեսկայում էր Գի-  
զակի տէրը: Թէև թիւրքական բանութիւնները  
այստեղ հասել էին զարհուրելի չափերին, բայց  
ամբողջ դեռ չէր թուականութիւն անսանձական  
զղաշարժեցից, որ բանութեան հետեւանքն է: Նա  
կրակվում էր միաժամանակ զանազան կողմերից  
և դա մի լաւ նշան էր, թէ հրդեհը համատարած  
կը լինէ: Ոգեւորում էր մանաւանդ գործի հեղ-  
տութիւնը: Իւրաքանչիւր մարդ հասկանում էր,  
որ իրանց անհաւաք ընդհանուր չէր պահանջում...

Ն. Աննա-Խաթունի գործը օր օրի վրա հեղ-  
տանում էր: Վիշեբային հիւրերը համարեա բո-  
լորովին պատրաստված էին գալիս և համարեա  
մի և նոյն խօսքերն էին ասում.— ոչ ոք յետ չի  
մնայ ընդհանուր գործից: Զանազան դնելով  
ամեն մէկին, մէկքի կրնէ գնում էր իր աղջկայ  
մօտ, հարեան սննեակը, և աւետում էր ամեն  
մի նոր աջողութիւնը: Գայիանէն իսկոյն վա-  
զում էր վերեւ, ուր Յովսէփը, թուղթը ծնկան  
վրա դրած, անհամբեր սպասում էր թէ երբ կը  
գրէ մի նոր անուն էլ: Նա արդէն մի մեծ ցու-  
ցակ ունէր. խոշոր ու գեղեցիկ տառերով մի  
քանի անգամ արտագրել էր անունները և ան-  
գիր էր արել ամեն մի տառ, ամեն մի գիծ:

—Ախ, եթէ ինձ էլ ուղարկեն գիւղերը, հա-  
ռաչում էր նա:

Նա կը գնար, կը քարոզէր, նա չէր հանգս-  
տանայ օր ու գիշեր: Բայց Գայիանէն համա-  
ձայն չէր, և երբեք անհամբար ընդունում  
էր, որ նա ճիշդ է ասում: Այո, ինչ խօսք, Յով-

ցէով: Այդպիսի նամակները մէկը, որի մէջ ան-  
յայտ սիրեկանը համոզում է յանուն իրանց զա-  
ւակի բաժանվել ամուսնուց և ապրել իրան հետ,  
ընկնում է կոմսի ձեռքը: Կոմսը հաւատացած  
լինելով, որ նամակը գրված է իր կողմը, ու-  
ղում է սպանել նրան, բայց յետոյ վճռում է  
ուրիշ կերպ վրէժ հանել նրանից: Նրանից ծա-  
ծուկ յանձնում է երեխային գիշերը գողութեան  
նպատակով իր տունը մտած Լիմասին (Գրեկով),  
որ սպանէ նրան կամ յամենայն դէպս կործ-  
էր ողով: Կոմսուհին ջնդրվում է (դէպքը տեղի  
է ունենում Պարզում 1888 թ.), երկու տարուց  
յետոյ առողջանում է և սկսում է փնտռել իր  
զուակին: Չաւակը, որի անունը Լիմասը դրել  
է Փանֆան (Մուղի-Բորօղլինա), կենդանի է:  
Նա և մի ուրիշ երեխայ, Կլօդինէ անունով  
(Կվարտաովա), ապրում են Լիմասի և նրա կը-  
նոջ՝ Զեֆերինայի (Շարօվա) խրճիթում, որ  
մի աւաղակային որջ է: Այդ «երկու մանուկնե-  
րը» լաւ սովորել են իրանց կարծեցեալ ծնողնե-  
րի արհեստը, բայց ատում են նրանց և քննոյշ  
կերպով սիրում միմեանց: 1894 թ.ին կոմսու-  
հին, Կարմէնը, Րոբէրը և կոմսը պատահում են  
իրար այդ խրճիթի մօտ: Փանֆանը գողանում է  
կոմսուհու քսակը և բռնվում է, բայց կոմսու-  
հին ազատում է նրան ոստիկանի ձեռքից յայտ-  
նելով, որ քսակը իրանը չէ: Զգացված Փան-  
ֆանը վերադարձնում է քսակը կոմսուհուն և  
խօսք է տալիս այլ ևս գողութիւն չանել: Մեծ-  
խաները վճռում են փախչել: Փանֆանը փախ-  
չում է, իսկ թրքախոտ Կլօդինէն առժամանակ  
մնում է, որ աւելի յարմար ժամանակ նոյնպէս  
փախչի Պարիզ, ուր նա և Փանֆանը պայմանա-  
ւորվում են հանդիպել որոշ կէտում: Կոմսը պա-  
հանջում է Լիմասից իր յանձնած երեխային:  
Լիմասը փախած Փանֆանի տեղ տալիս է նրան  
Կլօդինէին: Փանֆանը Պարիզում գտնում է կոմ-  
սուհու տունը: Պարզում է, որ նա է նրա ե-  
րեխան: Լիմասը ընկերների հետ գալիս է Փան-  
ֆանին բռնելու: Մտնում են երեխաների ննջա-  
րանը: Նկատում են Կլօդինէին և հրամայում  
են, որ լուի, բայց նա սիրելով Փանֆանին, այ-  
նուամենայնիւ աղաղակում է: Փաղարկող վիշա-  
ւորում է նրան: Գալիս են բոլորը և ձերբակա-  
լում աւաղակներին: Կլօդինէն մեռնում է:

Ինչպէս տեսնում էք, հեղինակը իր ձգձգված  
պիէսայով աշխատում է ամեն կերպ գրգռել և  
տանջել հանդիսատեսներին ջրբեր, որ, պէտք  
է խոտովանել, նրան միանգամայն աջողվում է,  
թէ և գլխաւորապէս այնպիսի կողմի միջոցների  
չնորհիւ, ինչպէս վէրքեր, արքանակ, դստակ,  
սպանութեան փորձեր և սպանութիւն: Այդ ի  
հարկէ, հակադրարուեստական է: Բարձր գեղա-  
րուեստի տեսանկիւնից չէ կարելի չը նկատել և  
այն, որ պիէսան շատ հարուստ է և մեղօղբամա-  
տիքական էֆֆէկտներով, թէ և մենք անձամբ  
կարծում ենք, լաւ մեղօղբաման այնպիսի բան է,  
որ բաւարարութիւն է տալիս հասարակութեան

նշքին ոչ ոք չի հաւատայ. նրա բերանից դուրս  
եկած իւրաքանչիւր խօսքը ծիծաղ կը յարուցա-  
նէր: Մարդիկ այդպէս են. առաջ լաւ հասակ,  
կանոնաւոր կազմուածք են պահանջում և ապա  
խօսք: Այդ պատճառով էր կաղիքի երեխան  
զգաւոր իրան: Փոխարէնը նա իր անհուն հըր-  
ճանքով ծառայում էր իր ցուցակին: Գրէի  
չարմելիս նա, կարծես, սրբազորութիւն էր  
կատարում: Իսկ ընկելու նա այդ թղթի կտորը  
գնում էր բարձի տակ, որպէս զի երազում էլ  
տեսնէ նրան, անգիր անէ անասելի քաղցրու-  
թեամբ...

Այսպէս անցնում էր գիշերը գիշերի հետեց:  
Իսկ ցերեկները ամբողջովին պատկանում էին  
Գայիանէին: Աննա-Խաթունը սպասում էր իր  
փեսային, նոր նոր միջոցների էր գտնում նրան  
աւելի դրաւելու, աւելի հաւատարմելու համար:  
Այդ ժամանակ Գայիանէի մօտ հաւաքվում էին  
կանայք ու աղջիկներ: Նրե գալիս էր բէկը, նը-  
րանք ընդհատում էին իրանց հանդարտ խօսակ-  
ցութիւնները և սկսում էին մի շարք ուրախու-  
թիւններ, երգում էին, ծիծաղում, երեքմն նոյն  
թիւ պարում էին ծափ տալով: Նստած փափուկ  
բարձերի վրա, բէկը մի առանձին ուշադրու-  
թեամբ ականջ էր դնում այդ ձայններին, որոնք  
նոյնպէս այրում էին նրան, ինչպէս Գայիանէի  
կարմրելը: Ուրեմն այդ հիւրին միայն կատարել  
չը գիտէ անգրան հրաշալի կերպով: Որքան ու-  
րախ ու կայտալի է նա. օրեր են անցնում  
այդպէս, իսկ նա չէ կշտանում. նա չը գիտէ  
յոյնիկ թուշկոտեղուց, խաղաղուց: Այդ կրակը  
անչէլ կը մնայ մինչև յաւիտեան. նա միայն  
կատարութեամբ չի յափշտակի, այլ և իր ծիծաղ-  
ներով, իր թղթադրոշմով: Օ՜, ոչ ոք հարեւ  
Արեւելքում չի ունենայ այսպիսի զարդ...

Ապագայի, մօտիկ ապագայի այդ սքանչելի  
հրապոյրները կաշկանդում էին բէկին. նա լուռ

մեծամասնութեան պահանջին, առանց որ և է  
փնտ հասցնելու. նրան: Ինչ փնտ, օրինակ,  
նրանից, որ մի քանի անգամ այդ երեկոյ գրեթէ  
բոլոր հանդիսատեսները լալիս էին, չնորհիւ բո-  
լոր դերակատարների անթերի անսամբլի և Մու-  
ղի-Բորօղլինայի և Կվարտաովայի հիւնալի  
խաղի: Այն էլ պէտք է ասել սակայն, որ այդ  
երեխաների տիպերը ինքն ըստ ինքեան լաւ են  
զուրս բերված պիէսայում և տեղ-տեղ տալիս  
են նրան հէքիաթային բանաստեղծական բնաւո-  
րութիւն:

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

Ապրիլի 9-ին  
Բագուի աղքատացուցում գաղթականների թի-  
ւը օրէցօր աւելանում է: Ամեն կողմից բազմա-  
թիւ խմբերով շարունակ գալիս են: Թէ անցեալ  
և թէ ներկայ տարվա ընթացքում հեռացածնե-  
րը նորից վերադառնում են: Թէ ինչն է ստի-  
ւում այդ թշուառներին անվերջ և անդադար  
թափառել, դա շատ հասկանալի է: Հիւանդը  
երկար ժամանակ պաւելելով, ձանձրանում է.  
նրա կողքերը ցաւում են և նա շարունակ ընկ-  
նում է մէկ կողքից միւսը, որ հանգստանայ,  
բայց մի քանի օրէկից յետոյ զգում է, որ միւս  
կողքն էլ ցաւեց: Այսպէս են և թշուառ գաղ-  
թականները. նրանք կարծում են, թէ մի երկ-  
րից միւսը դնալով, իրանց վիշտն ու դրուկները  
կը թեթեւանան. բայց ոչ մի քաղաքում չեն կա-  
ողանում ծծել իրանց հայրենական օդը, ոչ մի  
երկրում չեն զգում այն քաղցրութիւնները, ո-  
րոնցից նրանք գրկվել են: Բագու քաղաքում  
գաղթականների թիւի աւելանալու մի պատճառն  
էլ այն է, որ, համեմատելով միւս քաղաքների  
հետ, այստեղ նրանց վրա աւելի խնամք են տա-  
նում:

Չատիկ թաթախման երեկոյան աղքատացուցի  
սեղանատանը կային աւելի քան 550 հոգի գաղ-  
թականներ, մեծ և փոքր: Սեղանների և նստա-  
րանների պակասութեան պատճառով, նրանք  
խումբ-խումբ նստում էին յատակի վրա: Նայել  
այդ անմխիթանքների վրա անպակ ծանր էր: Թէ և  
ամենքը, մեծից մինչև նորածին մանուկը, այդ  
օրը նոր հագուստներ էին ստացել, հագել էին  
ոտնամաններ և կեղանկվում էին շատ լաւ, բայց  
երևում էր, որ նրանց համար ակտիվել չէր  
այդ, որովհետև նրանց մեծ մասը կորցրել է ծը-  
նողներ, եղբայրներ, քոյրեր և զաւակներ: Ընթ-  
րիկ սկզբին ներկայացան Գարեգին վարդապետ  
Յովսէփեան, որ ուղարկված է Վեհափառ Աս-  
թուղիկոսի կողմից Բագու՝ իրեն քարոզել, աղքա-  
տացուցի նախագահ Սեդրաք Զանգան և Բորէն  
աւազ Զանգան, որոնք օրհնելիք սեղանը, և  
երգեցին «Այսօր յարեաւ» շարականը ու չորհա-  
ւորեցին Զատիկը: Կարմիր ձուռն ու ձուռն ուռե-  
լուց յետոյ, բաժանվեց զինի. գաղթականները  
նստի կանգնելով, օրհնում էին իրանց խնամող-

նայում էր Աննա-Խաթունին, իսկ նրա աչքերը,  
կարծես, հարցնում էին. «Ո՞ր մասին են այնտեղ  
խօսում, չէ... Մի չեմ այդ ուրախութիւնների  
պատճառը: Աննա-Խաթունը ազանովեանք իւր-  
ւում էր այդ հարցերը նրանից և իր կանայքի  
պաշտօնները մի տեղ հաւաքելով, քաղցրիկ ծը-  
պիտներ էր խաղայնում իր չրթնեցների վրա:  
Նա էլ չէր խօսում, և լաւ էր անում: Ինչ հար-  
կաւոր են խօսքերը. բէկը արդէն գիտէ ամեն  
ինչ: Այդ աղջիկը օր օրի վրա աւելի չննալ, ա-  
ւելի յափշտակող էր երևում նրա աչքերին: Նա  
տեսնում էր, որ աղջիկներն ու կանայք մէկքի  
դռնից դուրս գալուն պէս ընդունում էին  
լուրջ կեղեկարանք. տեսնում էր, որ դրանց մի-  
ջոցով Աւետարանոցի և չրթակայ գիւղերի մէջ  
անընդհատ երթնեկութիւն էր կատարվում: Նւ-  
գիտէր, որ այդպէս էլ հարկաւոր է: Գիւղերից  
նա տեղեկութիւններ էր ստանում, որ ամեն տեղ  
կանայք ու աղջիկները ուրախութիւններ էին ա-  
նում: Յայտնի էր թէ ում համար... Միամիտ և  
յիմար են գեաւուրները: Նրանք չեն հասկա-  
նում թէ ինչ է սպասում իրանց և այդպէս ու-  
րախ են, որ ուղղահաւաստներ քիչ բարեհաճ աչ-  
ռան են իրանց վրա:

Թող այդպէս էլ լինէ, ինչ փնտ: Առանց մար-  
դարէի մատի չէր կարող հաստատվել այսպիսի  
դրուկներ: Մարդարէն իր ծառաների համար  
հրաշալի աջողութիւն է պատրաստում. նա գիտէ  
որ անհաւատները անդիտակ պիտի մնան, և ա-  
հա աւել է այդ չնրեր խնքը: Օ՜, մեծ մարդա-  
րէ, օգնի՛ր միշտ, և քո ստորակները կը փառա-  
ւորեն քո անունը իրանց սրբաբով... Մի քանի  
հանդիսատես շարժվում են, և այստեղ ապրել կը  
կարողանան միայն նրանք, որոնք կրեցուցնեն քո  
հաւատը: Բայց մինչև այդ՝ գեաւուրների ամե-  
նագեղեցիկ հիւրին իր չննալ դէմքը կը դարձնէ  
դէպի Մէքքա ու վարդ չրթնեցներով կը խոս-

նրերին, կեցցէ էին կանչում: Նրանց ձայնա-  
յում էին մինչև անգամ 5 տարեկան երեխանե-  
րը. նրանք էլ օրհնում էին և չնորհակալութիւն  
էին անում: «Աստուած ազգին պակասութիւն  
տայ, հաստատ պահի», ասում էին նրանք: Յե-  
տոյ բաժանվեց փաւ: Նրեք տեղում տիկնանքը  
նստում էին մեծ կաթնամանի առաջ, առաւ-  
տուկեանք լցնում էին ամանները, իսկ միւս  
տիկնանքը, աղքատացուցի կառավարչուհին և  
մի քանի երիտասարդներ բաժանում էին աման-  
ները: Շնորհակալութիւն ենք յայտնում աղքա-  
տացուցի կառավարչուհուն, որ թէ հաւաքած  
գումարներով և թէ իր սեփական ուժով ու աշ-  
խատանքով կառավարում է մօտ 560 հոգու, որ  
և գիշեր հոգում ու խնամք է տանում նրանց  
մասին:

ՆԱՄԱԿ ԴԵՐԲԵՆՏԻՑ

Ապրիլի 7-ին  
Մեծ պատի վերջերին եղանակը դարձանային  
էր, բնութիւնը արթնացել էր ձմեռային խոր  
քնից և նոր կեանք էր փչում մարդու երեխին,  
օրերը տաք, օդը մաքուր, փողոցները չոր: Դաշ-  
տերը հազիւ ազատվել էին ձյանի հաստ շերտից  
և պատրաստվում էին զարգարվելու բերւ ծա-  
ղիկների ու դաշար խոտով: Սակայն ո՞վ էր  
կարծում, թէ դա միայն ծաղի է, բնութեան մի  
կատակ: Յանկարծ փչեց հիւսիսային սառը քա-  
մին և ամեն բան տակն ու վրա եղաւ. ձյունը  
նորից ծածկեց գետինը և կարծես ուղոււ է վե՛ր  
դնել բնութեան նորածին կեանքին: Մեր Զատի-  
կը հարամ եղաւ: Ամբողջ ձմեռը լացովի ար-  
տաստեղով անցկացրինք, սպասում էինք Զառ-  
կին, որ գտնէ այդ օրը լի սրտով ուրախանալը,  
բայց այդ օրը ևս տխուր անցաւ. կարծես ճնու-  
թիւնը ուղում էր ասել, թէ չէ կարելի ուրա-  
խութիւններ անել այն ժամանակ, երբ ամբողջ  
քաղաքը, նրա հետ միասին ամբողջ Դաղստանը  
սուգի ու տառապանքների մէջ է: Քաղաքը հե-  
ծում է կարմրուկից, իսկ Դաղստանը սովոր:  
Զարմանալի բան, կարմրուկը, որ առհասարակ  
մի անմեղ, անվնաս հիւանդութիւն է, մեղանում  
կատարեալ պատուհաս է դարձել ու խեղճ զը-  
սիքի տունը բանդում: Զնայարիւ է, բարեկամ  
հանգամանքներում նա դարձեալ անվտանգ է  
անցնում, բայց քէ ս ի բ ի ն ո՞վ է տուել աղող կամ  
բարեկամը հանգամանքներ: Ծո՛ւրը ցուրտ, խո-  
նաւ, վերելք կաթնով, ներքեց փաւը, կառուկը  
չը կայ, փող չը կայ. էլ ինչպէս կարող է այդ-  
պիսի պայմաններում երկխան առողջանալ: Ահա  
չորրորդ ամիսն է, որ կարմրուկը մեղանից ձեռք  
չէ քաշում և հարկաւոր անմեղ երեխաներ զո՞-  
հացին ու դեռ գտնում են: Հայկական փողբիկ  
կոյտներն 25-ից աւել զո՞հ տուել, հրէաներից օ-  
րեկան 4—5 են մեռնում, իսկ թուրքերից, հա-  
ւանական է, որ աւելի շատ լինի, որովհետեւ դը-  
րանք քաղաքի աղքատակութեան զիւրաւոր մա-  
սըն են կարծում:

տովանէ, որ չը կայ ուրիշ աստուած, բացի Աշ-  
տից և Մուհամմէդը նրա մարդարէն է...

Այսպէս էր խօսում բէկը, երբ վերադառնում  
էր մէկքի ամրոցից: Օրը օօթիւ անգամ նա այդ  
խնդրածները ուղղում էր դէպի հարաւ. հա-  
մալի սրբազան խօսքերի հետ, որոնք թուում  
էին վկայելու թէ ինչ անհուն ջերմեռանդութիւն  
կայ այս ուղղահաւաստի մէջ, որ նստել է Վա-  
րանդայի սրտին ու պատրաստված է գոնեւ  
այդ սիրուն երկիրը խլալով արեւածաղաւ աս-  
տուծանալ...

Գայիանէն մի-մի անգամ, փորձի համար, թու-  
լացնում էր իր գործարարած զգուշութիւնները:  
Հեռեանքը շատ գոհացուցիչ էր: Պարզ երևում  
էր, որ նրա նշանածը շատ է հեռու գնացել և  
այլ ևս չէ կարողանում նկատել իր ջրի տակ եղա-  
ծը: Միայն մի բան նա երբեք չէր խախտել փոր-  
ձի. երբեք թող չը տուել, որ Նազուկ երեւոյ  
բէկի կամ տանապետ Ամէյի աչքին: Անհա-  
րին էր, որ աղջիկը երկար ու կասկածներ չը  
յարուցանէր...

Նւ իրաւ, Նազուկն այժմ ուրիշ մարդ էր:  
Նախկին խնկրի հետքն անգամ չէր երևում այդ  
մշտաւրու, ինքն իր մէջ փակված խեղճի վրա:  
Նրա դէմքը աւելի ևս մաշվել էր, այժմ աւելի  
խիտ էր ընդգծում սրտամաշ ցաւերի հետքերը:  
Բայց նրա ամբողջ էութեան վրա իջել էր մի  
հանդարտութիւն, որ հարթում, հաւատարմութեամբ  
էր տանջանքների գործած աւերածները: Կար-  
ծես, այլ ևս կամը չէր մնացել նրա մէջ կար-  
ծես յոյնի էր նա, ուսմասպառ դարձել:

—Զեմ կարողանում, մէկքի կին, չեմ կարո-  
ղանում, ասում էր նա ամեն անգամ, երբ Ան-  
նա-Խաթունը դնում էր նրան, հարցնելով թէ  
ինչու նա լուռ է, կարծես մի բան է կորցրել  
չէ կարողանում գտնել:

(Կը շարունակվի)







Типографія Грузинск. Издат. Т-ва, Лорисъ-Мелив. ул. № 13